**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ**
**ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ**
**Տ. Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԵՓՐԵՄ Բ.-ԻՆ**

1 ապրիլ, 2014թ.
Սիրիա, Դամասկոս

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Հոգեւոր մեծ ուրախությամբ շնորհավորում ենք Ձեզ համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Ասորի Ուղղափառ մեր քույր եկեղեցու 123-րդ գահակալ ընտրվելու երջանիկ առիթով: Ձեր ընտրությունը վկայությունն է Ասորի Ուղղափառ եկեղեցուն Ձեր նվիրյալ եւ ակներեւ սպասավորության: ԱՄՆ կատարած մեր այցերի եւ Հայաստանում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հանդիսությունների ընթացքին մենք առիթ ենք ունեցել ճանաչելու Ձեզ՝ որպես բարի եւ անձնդիր հոգեւոր հովվի, ով իր անձնական օրինակով փաստում է եղբայրության եւ բարեկամության կարեւորությունը, խրախուսում տարբեր եկեղեցիների ներկայացուցիչների միջեւ համագործակցությունը:

Լիահույս ենք, որ Ձեր գահակալության ընթացքում Դուք՝ որպես արժանավոր առաջնորդ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու, Ձեզ վստահված հոտը կառաջնորդեք դեպի անվտանգ եւ խաղաղ նավահանգիստ: Հայ Առաքելական եւ Ուղղափառ եկեղեցիների եղբայրական հարաբերություններն ամուր ու խոր արմատներ ունեն: Մեր երկու եկեղեցիները, քրիստոնեության վաղ շրջանից սկսած, ոչ միայն միասին ծառայել են քրիստոնեական աշխարհին՝ պարգեւելով հարուստ հայրաբանական, ծիսական եւ հոգեւոր ժառանգություն, այլեւ

ճակատագրակից են եղել՝ պայքարելով մեր ժողովուրդների արդար դատի եւ իրավունքների համար՝ մասնավորապես Առաջին համաշխարհային պատերազմի, մեր ժողովուրդների դեմ Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացրած ցեղասպանության հետ կապված:

Մեր երկկողմ համագործակցությունն ավելի բեղմնավոր է դարձել վերջին տասնամյակներին՝ մեր եկեղեցիների առաջնորդների փոխայցելությունների, աստվածաբանների միջեւ երկխոսության եւ էկումենիկ ջանքերի մեջ մեր ընդհանուր ներգրավվածության շնորհիվ: Այսօր մեր մտքերն ուղղված են Սիրիայում խաղաղության վերականգնմանը. մի երկիր, որտեղ Հայ Եկեղեցու զավակները դարեր շարունակ խաղաղ ու արդյունավոր կյանք են ապրել Ձեր հոտի եւ այլ կրոնների ներկայացուցիչների հետ: Լիահույս ենք, որ Ձերդ Սրբությունն իր հայրապետական խնամքը կտարածի մեր Եկեղեցու զավակների վրա, եւ համատեղ ջանքերի շնորհիվ մենք կկարողանանք օգնել հաղթահարելու այս ճգնաժամը, վերջ դնելու բռնությանը եւ վերականգնելու խաղաղությունը տարածաշրջանում:

Մեր աղոթքն է, որ ամենակարող Աստված Ձերդ Սրբությանը պարգեւի երկար տարիների արդյունաշատ ծառայություն, պարզ ու անամպ երկինք Սիրիայի ժողովրդին եւ Ձեր նվիրական իղձերի իրականացում՝ ի փառս Աստուծո եւ ի շինություն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու: